ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2

ք. Երևան 02.03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Գալաջյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Հրաժարվել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9 088 000 (ինը միլիոն ութսունութ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրի 4(20)-րդ և 5(21)-րդ չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվանից հաշված մեկ տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀՕրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի. եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով. փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում. իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչությունը):

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք.Երևան, Միքայելյան 66
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ. Մետաքս մ/հ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163218028989
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01283403
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ա. ԱՍՐՅԱՆ	Մ. ԳԱԼԱՋՅԱՆ

Տեխնիկական բնութագիրը-Գնման ժամանակացույցը

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Ծանոթություն
1(14)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ)	ՀՀ պետական դրոշ /հատ/: Դրոշը 1մ լայնությամբ և 2մ երկարությամբ /+-1սմ/, երկկողմանի եռագույն, ատլաս կտորից՝ կտորի խտությունը առնվազն 120գ/մ² յուրաքանչյուրն առանձին փաթեթավորված /փաթեթավորման համար նախատեսված թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով/: Երեք կողմերը՝ վերևից, ներքևից և աջից երիզակարված և առանց վնասվածքների, ելուստների և կողմնակի հետքերի, իսկ ձախ կողմից երիզը ներկարված շրջանակաձև ձողին ամրացնելու համար՝ տրամագիծը 3,5սմ:	Ապրանքի նմուշը նախապես համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Մատակարարումը ք. Երևան, Հասրաթյան 5 հասցեում, մատակարարի ուժերով:
2(15)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի)	ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի /հատ/: Դրոշը 2մ լայնությամբ և 4մ երկարությամբ/+-2սմ/, երկկողմանի եռագույն, ատլաս կտորից՝ խտությունը առնվազն 120գ/մ², յուրաքանչյուրն առանձին փաթեթավորված /փաթեթավորման համար նախատեսված թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով/: Երեք կողմերը՝ վերևից, ներքևից և աջից երիզակարված և առանց վնասվածքների, ելուստների և կողմնակի հետքերի, իսկ ձախ կողմից երիզը ներկարված շրջանակաձև ձողին ամրացնելու համար՝ տրամագիծը 3,5սմ:	Ապրանքի նմուշը նախապես համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Մատակարարումը ք. Երևան, Հասրաթյան 5 հասցեում, մատակարարի ուժերով:
3(17)	ՀՀ զինանշան (ՀՀ ՋՈՒ զինանշան)	ՀՀ ՋՈՒ զինանշան Պատկերով ասեղնագործված պանո, վերևում ուղղանկյունաձև է, ներքևում նման է կիսաշրջանաձև վահանի, շրջանակը փայտանյութից, լաքապատ՝ լայնությունը 37,5 սմ, բարձրությունը 45 սմ/+-1սմ/: Շրջանակի հաստությունը՝ 3,5սմ /+-0,5սմ/: Զինանշանը ասեղնագործվում է սպիտակ և կապույտ գույնի առնվազն 150գ/մ² խտությամբ գործվածքի վրա: Ասեղնագործությունը՝ գունավոր թելերով: «ՀԱՅԱՍՏԱՆ» բառը ասեղնագործված է արծաթագույն տառերով, կապույտ ֆոնի վրա, 1 տառի բարձրությունը՝ 3,5սմ, գծի հաստությունը 1սմ /+-0,2սմ/, «ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառակապակցությունը ասեղնագործված է կապույտ գույնով, 1 տառի բարձրությունը 2,3սմ /+-0,2սմ/, գծի հաստությունը 0,5սմ /+-0,1սմ/: Ետևի մասը փակված է կոշտ թղթով և ամրացված է ամուր կախիչ: Զինանշանը առանց կողմնակի հետքերի, ասեղնագործած պատկերը հստակ, առանց ելուստների:	Ապրանքի նմուշը նախապես համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Արտաքին տեսքը համաձայն հավելված 1.3-ի: ՀՀ ՋՈՒ զինանշանը փաթեթավորված ստվարաթղթե տուփով, վրան գունավոր զինանշանի պատկերով: Յուրաքանչյուր տուփում մեկ հատ ՀՀ ՋՈՒ զինանշան: Մատակարարումը ք. Երևան, Հասրաթյան 5 հասցեում, մատակարարի ուժերով:
4(20)	Տեղեկատու (Վաշտի (մարտկոցի) կրովի դիտողական քարոզչական լրակազմ.)	Վաշտի (մարտկոցի) կրովի դիտողական քարոզչական լրակազմ. Լրակազմը նախատեսված է վաշտերի (մարտկոցների) քարոզչական պարապմունքները դաշտային պայմաններում անցկացնելու համար: Լրակազմի մեջ մտնում են դիտողական քարոզչական նյութերի տեղադրման և կրելու համար անհրաժեշտ մետաղական կմախքով արկղը /ճամպրուկի տեսքով/, պարապմունքների ժամանակ ցուցադրվող քարոզչական նյութերի համար անհրաժեշտ վահանակը /գրատախտակի տեսքով/ և վշյա կոշտ անջրանցիկ կտորից պատրաստված պաստառը: Արկղի արտաքին չափսերը՝ 102Х48Х25սմ, երկու կողմերից ամրացված են մետաղական բռնակներ այն տեղափոխելու համար, իսկ կափարիչը ամրացված է 3-հատ ծղնիներով, կափարիչի բռնակը ամրացված է դրա դիմային մասում: Արկղի /ճամպրուկի/ արտաքին մակերեսի երեսապատում նվազագույնը 0,8սմ հաստությամբ նրբատախտակից (ֆաներա): Արկղի ներսի մասը, նվազագույնը 0,4սմ նրբատախտակից, ներկառուցված միջնապատերով բաժանված է քարոզչական նյութերը տեղադրելու համար անհրաժեշտ 3 մասի: Կափարիչի ետնամասում ձախից	Ապրանքի նմուշը նախապես համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Ամբողջ տեսականուն տրվում է երաշխիքային ժամկետ 1 տարի՝ ապրանքի ընդունման օրվանից: Լրակազմը պետք է լինի չօգտագործված: Մատակարարումը ք. Երևան, Հասրաթյան 5 հասցեում, մատակարարի ուժերով:

		աջ ամրացված են 3 հատ Ա4 և 1 հատ Ա6 չափսի պոլիէթիլենային գրպաններ, գրիչների և մատիտների համար նախատեսված 5-6 տեղանոց կախիչ, իսկ ամբողջ մակերեսին համապատասխան գույներով պատկերված է /ներկված/ ՀՀ պետական դրոշը: Վահանակը իրենից ներկայացնում է մետաղական կոնստրուկցիա, որը քանդվում և հավաքվում է, դյուրին կերպով բացազատվում է դաշտային պայմաններում՝ քարոզչական պարապմունքների անցկացման ժամանակ: Արտաքին չափսերը՝ 168սմX160սմ, հենակների երկարությունը՝ 88սմ: Հենակները դաշտային պայմաններում հողի մեջ մխրճելու համար ներքևի մասում ամրացվում են մետաղական, սրածայր սեպերով՝ 10-12 սմ: Վահանակի լրացուցիչ կայունություն ապահովելու համար դիմային և ետևի մասերում պատրաստվում են կեռիկներից կախելու համար նախատեսված մետաղական պարաններ՝ 3մ երկարությամբ- 6 հատ, իրենց մետաղական սրածայր սեպերով՝ 10-12 սմ /հողի մեջ ամրացնելու համար/ 8 հատ: Վահանակի վրա ամրացվում է վշյա կոշտ անջրանցիկ կտորից պատրաստված պաստառը՝ 160սմX200սմ, որի վրա կարված են գաղափարախոսական նյութերի տեղադրման համար թվով՝ 17 հատ կոշտ թափանցիկ պոլիէթիլենային գրպաններ, որոնցից մեկ հատը՝ 45սմX64սմ չափսով կենտրոնում, 10 հատը նախորդի շուրջ կենտրոնական մասերում՝ 45սմX32սմ չափսերով, մեկ հատը՝ վերին մասում՝ 23սմX135սմ չափսով և ստորին մասում 5 հատ՝ 23սմX27սմ չափսերով: Վաշտի կրովի դիտողական քարոզչական լրակազմը պետք է ամբողջությամբ /արտաքինից և ներսի մասը/ պատված լինի պաշտպանիչ ջրադիմացկուն շերտով՝ ներկանյութի բավարար օգտագործումով, գործող ՀՀ ԶՈՒ դաշտային համազգեստին համապատասխան գույներով: Վրան գունավոր տպագրվում է լրակազմի անվանումը՝ 6 սմ բարձրությամբ տառերով: Լրակազմի մեջ տեղադրվում են անհրաժեշտ գործիքները՝ պտուտակահան, մուրճ, աքցան	
5(21)	Նկարչական վրձիններ (Նկարչական և քանդակագործական միջոցներ)	Նկարչական և քանդակագործական միջոցներ: Իր մեջ ներառում է. առնվազն 50X70 սմ չափսի նկարչական կտավ (կտավը պատված լինի նկարչական ծածկանյութով /գրունտով/)-1հատ, ամրացված /ձգված/ համապատասխան փայտե ենթաշրջանակի վրա, ետնամասում կախիչ: Առնվազն 12 գույնի յուղաներկ՝ յուրաքանչյուրը՝ առնվազն 46 մլ-ոց տարայով: Նկարչական եռախառնուկ /տրայնիկ/՝ առնվազն 100 գր-ոց տարայով /գործարանային արտադրության/՝ 1 հատ, նկարչական լուծիչ գործարանային արտադրության/՝ առնվազն 100 գր-ոց տարայով՝ 1 հատ, վրձինների կոմպլեկտ՝ առնվազն 13 հատանոց, տարբեր չափսերի /շետինա, ֆլեյ և սուր ծայրով/, ներկապնակ փայտանյութից /պալիտրա/՝ առնվազն 1 հատ, հարմարեցված ձեռքում բռնելու համար, սև նկարչական մատիտ՝ առնվազն 2 հատ, նկարչական ռետին՝ առնվազն 1 հատ, քանդակագործական կավ՝ 1 տուփ՝ առնվազն 5 կգ-ոց, տարբեր քանդակագործական գործիքներ՝ առնվազն 5 հատ /մաստիխիտ, շպատել, ստեկ, քանդակագործական դանակ, քանդակագործական ասեղ/: Պետք է լինի նաև կավագործական սեղանիկ /հարթակ/ առնվազն 1 հատ, առնվազն 2 հատ լաթ և առնվազն 1 հատ սպունգ:	Ապրանքի նմուշը նախապես համաձայնեցվում է ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Քանդակագործական գործիքներին տրվում է երաշխիքային ժամկետ 1 տարի՝ ապրանքի ընդունման օրվանից: Մատակարարումը ք. Երևան, Հասրաթյան 5 հասցեում, մատակարարի ուժերով:

Ծանոթություն՝

1. Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
2. Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 4(20)-րդ չափաբաժնի համար մինչև 1%:

3. Ներկայացված նմուշները հաստատվում կամ մերժվում են 3 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս:
5. Եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունն առ այն, որ փաստացի մատակարարված ապրանքները գերազանցում են պայմանագրով նախատեսված պայմանները, ապա պատասխանատու ստորաբաժանման կողմից այն ընդունվում է՝ առանց ՀՀ պաշտպանության նախարարին դիմելու:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	
1(14)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ)	հատ	2 000	2 300	4 600 000	Ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետներում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջները
2(15)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի)	հատ	100	10 000	1 000 000	
3(17)	ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան)	հատ	20	19 900	398 000	
4(20)	Տեղեկատու (Վաշտի (մարտկոցի) կրովի դիտողական քարոզչական լրակազմ.)	հատ	15	140 000	2 100 000	
5(21)	Նկարչական վրձիններ (Նկարչական և քանդակագործական միջոցներ)	հատ	30	33 000	990 000	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 **պայմանագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	
1(14)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ)	35821400/501	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
2(15)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի)	35821400/502	
3(17)	ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան)	35821100/501	
4(20)	Տեղեկատու (Վաշտի (մարտկոցի) կրովի դիտողական քարոզչական լրակազմ.)	22131200/501	
5(21)	Նկարչական վրձիններ (Նկարչական և քանդակագործական միջոցներ)	37821100/503	

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
Տնօրեն
Մ. ԳԱԼԱՋՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի՝/այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրընդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն